ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական դատարան,
նախագահող դատավոր Ժ.Չիչոյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր Ա.Մարտիրոսյան

2025 թվականի նոյեմբերի 13-ին քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով թիվ ՕՀՄ-36 դատական վարույթով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝

2024 թվականի սեպտեմբերի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը 2024 թվականի մայիսի 20-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է ներկայացրել [redacted] նկատմամբ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ժամկետը երկու ամսով երկարաձգելու մասին միջնորդություն:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի մայիսի 20-ի որոշմամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդությունը բավարարվել է:

3. Վերաքննիչ դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ թիվ 62263724 քրեական վարույթով մեղադրյալներ [redacted] պաշտպան [redacted] ու մեղադրյալ [redacted] պաշտպան [redacted] հատուկ վերանայման բողոքների քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի մայիսի 20-ի որոշումը բեկանել է և կայացրել դրան փոխարինող դատական ակտ՝ մերժելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդությունը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Հատուկ վերանայման բողոքի հիմքերը, դրանք հիմնավորող փաստարկները և պահանջը.

5. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, այդ որոշմամբ թույլ է տվել

դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել մինչ այդ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին կազմված արձանագրությունը՝ անտեսելով այն հանգամանքը, որ դրանով իրավասու մարմինը փաստել է, որ դատարանի՝ 2024 թվականի մարտի 25-ի որոշման հիման վրա [redacted] նկատմամբ իրականացվում են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց ընթացքում, ի թիվս այլնի, տեղեկություններ են ստացվել այն մասին, որ [redacted] հիվանդության կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու գործընթացը կազմակերպելու համար հեռախոսազանգերի և հանդիպումների ընթացքում առանձնապես խոշոր չափով կաշառք տալու շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերել իրավասու անձանց հետ: Նույն արձանագրությամբ նաև փաստվել է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեռևս հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Միևնույն ժամանակ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ խնդրո առարկա իրավահարաբերությունները ծագել են մինչև քրեական վարույթ նախաձեռնելը, երբ իրավասու մարմնի համապատասխան գործիքակազմը, ի տարբերություն նախաքննության փուլում քննիչի ունեցած լայն գործիքակազմի՝ գաղտնի քննչական գործողության թույլտվություն ստանալու համար ապացուցողական մի շարք գործողություններ կատարելու և դրանց արդյունքները դատարան ներկայացնելու հնարավորության հաշվառմամբ, սահմանափակ է:

Բողոքաբերը նշել է նաև, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված առանձնահատկությունները հաշվի առնելու դեպքում Վերաքննիչ դատարանն իրավաչափ եզրահանգման կգար առ այն, որ միջնորդության հիմնավորվածության շեմը սույն դեպքում կարող է հաղթահարվել իրավասու մարմնի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական

միջոցառումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրության բովանդակությամբ՝ հաշվի առնելով նաև տվյալ պարագայում ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությանը բնորոշ բարձր աստիճանի լատենտայնության հանգամանքը:

5.1. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը բեկանել և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ մերժելով մեղադրյալներ [redacted] պաշտպան [redacted] և մեղադրյալ [redacted] պաշտպան [redacted] բողոքները:

<u>Հատուկ վերանայման բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2024 թվականի մայիսի 20-ի միջնորդության համաձայն՝ *«(...) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետաքննչական վարչության չորրորդ բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ* [redacted] *պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու գործընթացը կազմակերպելու համար իրավասու պաշտոնատար անձանց հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, անձամբ կամ միջնորդի միջոցով, պատրաստվում է վերջիններիս տալ առանձնապես խոշոր չափերով՝ հինգ միլիոն ՀՀ դրամը գերազանցող կաշառք:*

2024 թվականի մարտի 25-ի միջնորդության հիման վրա Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը թույլատրել է [redacted] *նկատմամբ՝ իր կողմից օգտագործվող* [redacted] *գործարանային համարի բջջային հեռախոսով և* [redacted] *բջջային հեռախոսահամարի միջոցով իրականացնել «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում»,* [redacted] *տանը և վերջինիս կողմից փաստացի շահագործվող* [redacted] *մակնիշի* [redacted] *հաշվառման համարանիշի և* [redacted] *մակնիշի* [redacted] *ավտոմեքենաներում՝ «Ներքին դիտում», ինչպես նաև բաց տարածություններում, հանրային վայրերում կամ բնակարան չհանդիսացող փակ տարածությունում՝ տեխնիկական միջոցների*

կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ երկու ամիս ժամկետով՝ 2024 թվականի մարտի 25-ից մինչև 2024 թվականի մայիսի 25-ը ներառյալ:

«Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում, ի թիվս այլնի, տեղեկություններ են ստացվել այն մասին, որ [redacted] հիվանդության կեղծ փաստաթղթեր կազմելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու գործընթացը կազմակերպելու համար հեռախոսազանգերի և հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերել իրավասու անձանց հետ առանձնապես խոշոր չափերով՝ հինգ միլիոն ՀՀ դրամը գերազանցող կաշառք տալու շուրջ:

Իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեռևս հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

(...)

Նկատի ունենալով, որ (...) ներկայացված նյութերը պարունակում են տեղեկություններ [redacted] կողմից առերևույթ ծանր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքների կատարման և այդ հանցավոր գործողությունները վերջինիս կողմից շարունակելու հավանականության մասին, միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործությունների բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ այլ եղանակով ողջամտորեն հնարավոր չէ այդ տեղեկատվության ձեռքբերումը, և գտնելով, որ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու, ինչպես նաև նրա կողմից հանցավոր գործունեության շարունակումը հայտնաբերելու և կանխելու նպատակով անհրաժեշտ է վերջինիս նկատմամբ իրականացվող «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության

վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամկետը երկարաձգել երկու ամսով (...)»[1]:

7. Նախորդ կետում նշված միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարան ներկայացված՝ ««Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին» վերտառությամբ արձանագրության համաձայն՝ *«(...) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի մարտի 25-ի որոշման հիման վրա* [redacted] *նկատմամբ անցկացվում են «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:*

[Վերոնշյալ] օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում, ի թիվս այլնի, տեղեկություններ են ստացվել այն մասին, որ [redacted] *հիվանդության կեղծ փաստաթղթեր կազմելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու գործընթացը կազմակերպելու համար հետախուզանգերի և հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերել իրավասու անձանց հետ առանձնապես խոշոր չափերով՝ հինգ միլիոն ՀՀ դրամը գերազանցող կաշառք տալու շուրջ:*

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեռևս հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը»[2]:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի մայիսի 20-ի որոշմամբ արձանագրվել է. *«(...) [Մ]իջնորդությունը և ներկայացված նյութերն իրենց համակցությամբ բավարար հիմք են տալիս հանգելու հետևության, որ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-*

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 10-13:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 3:

հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում կարող են ստացվել միջնորդության մեջ նշված տեղեկատվությունը հիմնավորող փվյալներ, ինչը կնպաստի ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ենթադրյալ ծանր հանցագործության բացահայտմանը: Բացի այդ, օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնող մարմնի կողմից «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն այլ եղանակով ողջամտորեն անհնարին է: (...)»[3]:

9. Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով նաև Ռուբեն Խլղաթյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, 2024 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ բեկանել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և մերժել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ժամկետը երկարաձգելու մասին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդությունը՝ արձանագրելով հետևյալը. *«(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ միջնորդությամբ և կից նյութերով չի ներկայացվել ինչպես կատարված գործողությունների արդյունավետության մասին վկայող փաստեր, այլև՝ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ բավարար փվյալներ: Մասնավորապես՝ փաստարկումն առ այն, որ ձեռնարկված միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվություն, Վերաքննիչ դատարանի համար ծանրակշիռ փաստարկ չէ և այն հիմնավորող այլ փվյալների բացակայության պայմաններում բավարար չէ նման անհնարինության մասին փաստարկված հերքության հանգելու համար:*

Հենց նույն՝ Դոագոյևիչն ընդդեմ Խորվաթիայի գործով, Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ ազգային դատարանի այն որոշումը, որը թույլ է

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 15-18:

պալիս գաղտնի դիտարկում, պետք է լինի գրավոր և իր մեջ պարունակի պատճառների շարադրանք, որում նշվում են համապատասխան հանգամանքներ, որոնք արդարացնում են գաղտնի դիտարկման անհրաժեշտությունը, սահմանները, և այլն: Տվյալ դեպքում Վերքաննիչ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանի դատական ակտում բացակայում է վերոնշյալ հանգամանքների շարադրանքը, իսկ վկայակոչվածը չի արդարացնում թույլատրված կոշտ միջամտության համաչափությունը և անհրաժեշտությունը:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերի, իսկ ավելի կոնկրետ՝ կազմված համապատասխան արձանագրության հիման վրա անձի իրավունքների սահմանափակումն իրավաչափ համարվել չի կարող, ուստի ստորադաս դատարանը, բավարարելով ներկայացված միջնորդությունը, հանգել է վարույթի նյութերից և վերաբերելի իրավական կարգավորումներից չբխող հետևության: (...)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք [redacted] նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

11. ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 141-179:

այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից գաղտնի և բացահայտ մեթոդների ու միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամրագրումն ու իրացումն է:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ամբողջ ծավալով իրականացվում են ինչպես օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից իրենց վերապահված հիմնական խնդիրների իրականացման շրջանակներում, որպես ինքնուրույն գործունեություն, այնպես էլ նախաձեռնված քրեական վարույթի

իրականացվող հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«[Ներքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ առերևույթ առկա են հիմքեր՝ կասկածելու, որ անձը, որի նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն և այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն անհնարին է»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

«1. [Ներքին դիտում, նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում, թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում, ֆինանսական գործարքների վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, ապա կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ դրանց ժամկետի երկարաձգման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում

անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: Միջնորդությունը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

(...)

4. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու կամ դրա ժամկետը երկարաձգելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը դատարանը քննում է գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդության քննության համար Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները»:

12. Նախորդ կետում մեջբերված նորմերի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հիմնարար բնույթն ու իր նախադեպային իրավունքում հետևողականորեն բացահայտել է այդ իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության բովանդակությունը, համաձայն որի՝ նշված հիմնարար իրավունքին միջամտության ավելի բարձր աստիճան ունեցող օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաև գաղտնի քննչական գործողությունների իրականացման նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը պատշաճ ընթացակարգի երաշխիք է՝ գաղտնի վերահսկողությունը թույլատրող որոշումներում համապատասխան պատճառները նշելու պահանջի հետ մեկտեղ, ապահովելու այն, որ կիրառման ենթակա միջոցառումները պատահականորեն կամ առանց պատշաճ և հատուկ

ուսումնասիրման չեն թույլատրվելու դատարանի կողմից[5]: Վերահսկողության այդ գաղտնի միջոցառումների դեպքում, գործի փաստական հանգամանքների *(in concreto)* համակողմանի գնահատմամբ, դատարանը պետք է ստուգման ենթարկի հայցվող միջամտության՝ իր բնույթին, նպատակային նշանակությանն ու օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պայմաններին համապատասխանելու հարցը՝ որոշելու համար, թե արդյո՞ք առկա են հայցվող միջամտությունը թույլատրելու բավարար և հիմնավոր հիմքեր:

Այս առումով անհրաժեշտ է վերստին ընդգծել, որ մասնավոր ու ընտանեկան կյանքի իրավունքին միջամտության ավելի բարձր աստիճան ունեցող օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաև՝ գաղտնի քննչական գործողությունների կատարումը պետք է լինի իրավասու մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման վերջին միջոց և կատարվի միայն այն դեպքում, երբ այլ եղանակով անհրաժեշտ այդ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն անհնարին է[6]:

Վճռաբեկ դատարանը, բացահայտելով քրեական վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման անհրաժեշտությունը և համաչափությունը հիմնավորելու պահանջի բովանդակությունը, *Վազգեն Ոսկանյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է, որ օպերատիվ աղբյուրից ստացված՝ որոշակի իրադարձությունների կամ անձանց վերաբերելի տեղեկությունը քրեական վարույթի շրջանակներից դուրս դառնում է օպերատիվ-հետախուզական մարմինների ուսումնասիրության առարկա և այդ տեղեկատվության հավաստիության ստուգման անհրաժեշտությունն է առաջացնում որոշակի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու՝ օպերատիվ-հետախուզական մարմնի միտումը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ նախաձեռնված քրեական վարույթի պայմաններում քննիչը ստանում է ենթադրյալ հանցանքին վերաբերող հանգամանքները պարզելու բավականին լայն գործիքակազմ, որը դրսևորվում է

---

[5] Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Dragojević v. Croatia* գործով 2015 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 68955/11, 94-րդ կետ:

[6] Տե՛ս, *inter alia*, Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Սարգսյանի* գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԴ/0229/01/16 որոշումը:

տարաբնույթ վարութային գործողությունների կատարմամբ և դատավարական ակտերի ընդունմամբ, որոնց արդյունավետության երաշխիքներն այն դատավարական կարգավորումներն ու ընթացակարգերն են, որոնք մի դեպքում՝ սահմանում են վարութային պարտականություններ, իսկ մյուս դեպքում՝ կոչված են ապահովելու այդ պարտականությունների կատարումը: Այսինքն, քրեադատավարական ընթացակարգն էապես բարձրացնում է նախաքննական մարմնի տեղեկացվածության աստիճանը, նախատեսում վերապահված խնդիրներն ավելի արդյունավետ իրականացնելու հնարավորություն, որպիսին, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը չունի, և ըստ էության չի էլ կարող ունենալ, ինչով էլ պայմանավորված, ի տարբերություն գաղտնի քննչական գործողությունների, օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է սակավ տեղեկատվության առկայության պայմաններում: Ողջ վերոգրյալը բավարար է արձանագրելու, որ թեև երկու դեպքում էլ դատական վերահսկողությունը միտված է միևնույն նպատակին՝ անձի հիմնարար իրավունքի կամայական սահմանափակումը կանխելուն, սակայն, քրեական վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը լուծելիս, այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունն ու համաչափությունը, նույն բովանդակությունը չեն կարող ունենալ. տվյալ դեպքում միջնորդությունը հիմնավորող փաստական հանգամանքները որակական հատկանիշների առումով կարող են նվազ լինել: Նշվածը վկայում է նաև այն մասին, որ քրեական վարույթի շրջանակներից դուրս օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը լուծելիս օպերատիվ տեղեկությունների օգտագործումը կարող է անխուսափելի լինել, որոնց բավարարության աստիճանը պետք է յուրաքանչյուր անգամ դատարանը գնահատի:

Ուստի, դատական վերահսկողության տիրույթում գտնվող օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման թույլտվություն ստանալու միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմում առկա օպերատիվ տեղեկատվության հավաստիությունը հաստատող այլ փաստական տվյալներ ներկայացնելու պահանջը համահունչ չէ օպերատիվ-հետախուզական

գործունեության բնույթին ու նպատակային նշանակությանը, քանզի հենց այդ տեղեկատվության ստուգման համար է հայցվում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը՝ պայմանով, որ այլ եղանակով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է[7]:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատարանի թույլտվությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամկետը երկարաձգելու միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմին, [redacted] գործով որոշման շրջանակներում արձանագրել է, որ նշվածի առումով գնահատման առարկա պետք է դառնա նաև մինչ այդ իրականացված միջոցառման ընթացքում ստացված արդյունքը, որը, կախված օպերատիվ-հետախուզական կոնկրետ միջոցառման առանձնահատկություններից, կարող է դատարան ներկայացվել ինչպես այն ամրագրող արձանագրության, այնպես էլ համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող այլ փաստաթղթի տեսքով:

Ընդ որում, նախորդիվ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքը, պայմանավորված տարբեր հանգամանքներով (օրինակ՝ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացքում անձը չի օգտագործել համապատասխան կապի միջոցը կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման նպատակի իրացման տեսակետից հետաքրքրություն ներկայացնող հաղորդակցություններ տվյալ ժամանակահատվածում չի ունեցել, կամ «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ամբողջ ընթացքում անձը բացակայել է օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման վայրից, կամ տեղի է ունեցել հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների խափանում և այլն), կարող է նաև մինչ դրա կատարումը ստացված տեղեկության հավաստիությունն ամրապնդող փաստական տվյալներ չպարունակել: Ինչը, սակայն, ինքնին հիմք չի կարող հանդիսանալ համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու ժամկետի երկարաձգումը՝ օրենքով

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վազգեն Ոսկանյանի* գործով 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՕՀՄ-56/12.10.2023 որոշումը:

սահմանված առավելագույնը չգերազանցող ժամկետի շրջանակներում[8], մերժելու համար: Ավելին, օրենսդիրը նաև վերը նշված իրավիճակների հաշվառմամբ է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներով ամրագրել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետների երկարաձգման ինստիտուտը[9]:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- 2024 թվականի մայիսի 20-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել [redacted] նկատմամբ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետը երկու ամսով երկարաձգելու մասին միջնորդություն[10],

- նշված միջնորդությանը կից, ի թիվս այլնի, Առաջին ատյանի դատարան է ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության չորրորդ բաժնի օպերլիազորի կողմից կազմված՝ «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» **օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին արձանագրություն**, որի համաձայն՝

1) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մարտի 25-ի որոշման հիման վրա [redacted] նկատմամբ անցկացվում են «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ,

2) այդ միջոցառումների ընթացքում, ի թիվս այլնի, տեղեկություններ են ստացվել այն մասին, որ [redacted] հիվանդության կեղծ փաստաթղթեր կազմելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու գործընթացը

---

[8] Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի դրույթները:

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ [redacted] գործով 2025 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ ՕՀՄ-33 որոշումը:

[10] Տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը:

կազմակերպելու համար հեռախոսազանգերի և հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերել իրավասու անձանց հետ առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու շուրջ,

3) ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեռևս հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվություն[11],

- Առաջին ատյանի դատարանը 2024 թվականի մայիսի 20-ին որոշում է կայացրել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդությունը բավարարելու մասին[12],

- թիվ 62263724 քրեական վարույթով մեղադրյալներ [redacted] պաշտպան [redacted] ու մեղադրյալ [redacted] պաշտպան [redacted] կողմից ներկայացված բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ բեկանել է Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատական ակտը և մերժել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդությունը՝ էության մեջ այն հիմնավորմամբ, որ միջնորդությամբ և կից նյութերով չի ներկայացվել ինչպես կատարված գործողությունների արդյունավետության մասին վկայող փաստեր, այնպես էլ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ բավարար տվյալներ:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերի, մասնավորապես՝ կազմված համապատասխան արձանագրության հիման վրա անձի իրավունքների սահմանափակումն իրավաչափ չի կարող համարվել[13]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝

---

[11] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[13] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ մասնավոր ու ընտանեկան կյանքի իրավունքին միջամտելը շարունակելու թույլտվությունը սույն դեպքում հայցվել է քրեական վարույթի շրջանակներից դուրս՝ անձի կողմից բարձր աստիճանի լատենտայնություն ունեցող ենթադրյալ կոռուպցիոն հանցանքի կատարմանն առնչության հիմք տվող տեղեկատվության, այդ թվում՝ ենթադրյալ գործունեության որոշ հանգամանքների մասին փաստական տվյալների առկայության պայմաններում:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ նախաձեռնված քրեական վարույթի բացակայության պայմաններում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու թույլտվության, ինչպես նաև դրա ժամկետի երկարաձգման միջնորդությունները լուծելիս այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունն ու համաչափությունը, նույն բովանդակությունը չեն կարող ունենալ, ինչ նախաձեռնված քրեական վարույթի պայմաններում: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է սակավ տեղեկատվության առկայության պայմաններում, ուստի այդ դեպքում միջնորդությունը հիմնավորող փաստական հանգամանքները որակական հատկանիշների առումով կարող են նվազ լինել:

Վճռաբեկ դատարանը վերստին ընդգծում է նաև, որ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվության մասին միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմում առկա օպերատիվ տեղեկատվության հավաստիությունը հիմնավորող այլ փաստական տվյալներ ներկայացնելու պահանջը համահունչ չէ օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթին և նպատակային նշանակությանը[14], ուստի նշված պատճառաբանությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը չի կարող իրավաչափ համարվել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դատական ակտի հիմքում դրված՝ *Ռուբեն Խլղաթյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված

---

[14] Տե՛ս, *inter alia*, Վճռաբեկ դատարանի՝ *Վազգեն Ոսկանյանի* գործով 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՕՀՄ-56/12.10.2023 որոշումը:

իրավական դիրքորոշմանը[15], ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել, որ տվյալ գործով Վճռաբեկ դատարանի եզրահանգումը պայմանավորված է եղել կոնկրետ վարույթի շրջանակներում ներկայացված միջնորդության հիմնավորվածության տեսանկյունից տրված գնահատականով[16]:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն առ այն, որ միջնորդությամբ և կից նյութերով չեն ներկայացվել այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ բավարար տվյալներ՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ տվյալ դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարն Առաջին ատյանի դատարանին միջնորդել է երկարաձգել դատարանի համապատասխան որոշմամբ արդեն իսկ թույլատրված և ընթացքի մեջ գտնվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետը: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը չի հստակեցրել և որևէ ողջամիտ փաստարկ չի ներկայացրել առ այն, թե ինչ փաստակազմ պետք է ներկայացվեր կամ ինչ այլ եղանակով էր հնարավոր անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը, ինչ ավելի մեղմ միջոցի կիրառմամբ էր հնարավոր հասնել օպերատիվ գործունեություն իրականացնող մարմնի վրա դրված խնդիրների լուծմանը:

Դրա հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարան է ներկայացվել «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին արձանագրությունը, որում փաստվել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մարտի 25-ի որոշման հիման վրա [redacted] նկատմամբ արդեն իսկ անցկացվում են վերը նշված օպերատիվ-հետախուզական

---

[15] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

[16] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վազգեն Ոսկանյանի* գործով հիշյալ որոշման 14-րդ կետը:

միջոցառումները, և դրանց ընթացքում, ի թիվս այլնի, տեղեկություններ են ստացվել այն մասին, որ [redacted] հիվանդության կեղծ փաստաթղթեր կազմելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու գործընթացը կազմակերպելու համար հեռախոսազանգերի և հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերել իրավասու անձանց հետ կաշառք տալու շուրջ, սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում դեռևս հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման ու հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Վերաքննիչ դատարանը, բովանդակային վերլուծության չենթարկելով վերը նշված արձանագրությունը, անհիմն դատողություն է արել առ այն, որ ձեռնարկված միջոցառումների իրականացման արդյունքում ենթադրյալ հանցագործության բացահայտման և հանցավոր գործունեության շարունակումը կանխելու համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման վերաբերյալ փաստարկումը այն հիմնավորող այլ տվյալների բացակայության պայմաններում բավարար չէ նման անհնարինության մասին փաստարկված հետևության հանգելու համար:

Այսպիսով, վերն արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ [redacted] նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ժամկետը երկարաձգելու միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և նշված միջնորդությունը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

15. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն վարույթով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 293-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է վարույթի ելքի վրա, ինչպես նաև հանգեցրել է վարույթի հանրայնության սկզբունքի խախտման, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 362-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումն ամբողջությամբ բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշում

կայացնելիս թույլ չի տվել վարույթի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի մայիսի 20-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ ու 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՕՀՄ-36 դատական վարույթով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 20-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

_____ Ս.ՉԻՉՈՅԱՆ

_____ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ